

«Համ(ա)ղ(ա)սպա մարծպանի» ձեռով: Ուրեմն Համադասպ մարծպան էր նը-
շանակուած և այս տիտղոսն է որ յետոյ իրեն յաջորդները իբր յատուկ անուն
գործածեցին: Մարծպան կամ աւելի ճիշդ՝ մարդպան պահաւարէն (և պարս-
կերէն) կը նշանակէ «կուսակալ» (Տե՛ս Աճառեանի Անճնանունների Բառա-
րան): Ի մէջ այլոց հոս յիշենք որ Աճառեան Համադասպ մարծպանի մասին
կը գրէ որ «մեռել է պատերազմի մէջ և թաղուել է Սանահինի վանքում»:
Իրեն հետեւած է նաև Արշակ Այլոյաճեան իր «Հայաստանի Սահմանները»
գործին մէջ: Ասիկա ծագած է 1215 թուի արձանագրութեան սխալ ըմբռնման
մէջ. հոն ոչ թէ Համադասպ մարծպանի մահուան մասին է որ կը գրուի, այլ
անոր Սարգիս որդւոյն պատերազմի մէջ սպանման (Յիշատ. 3):

1191ի յիշատակարանին մէջ (Յիշատ. 1) կը յիշուի որ Համադասպ Ա
մարծպանի թոռները միասին կու տան կալուածներ Սանահինի. «...տվաք
զՄանթշա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տայքս՝ ի Սան(ա)հինս...»:
Տարակոյս չի կրնար ըլլալ որ տրուած հողերը «ի մեր հայրենեացս» էին, այլ-
սինքն հօրենական ժառանգութեամբ ստացուած հողեր կամ կալուածներ:
Մանթշա, Մանթաշ տեղանուն զժրախտարար անձանոթ կը մնայ ինծի. սա-
կայն Տայք, ուր հայրենական հողեր ունեցած կ'երեւին Համադասպեանք,
Մամիկոնեաններու կալուածն էր, որուն տէր եղան Թ Դարուն Բագրատու-
նիները և անկէ ալ 1001 թուականէն վերջ Բագրատունեաց վրացական ճիւղին
անցաւ: Արդեօ՞ք այս արձանագրութեան Տայքս կարելի է նոյնացնել Տայքի,
Տայց, հետ: Այն ատեն կարող ենք ըսել որ Համադասպ Ա մարդպանը Դոնդ
եկաւ Տայքէն (Մանթաշ[?]), ուր դեռ կալուածներ ունէին, որոնք նուիրեցին
Սանահինի վանքին: 1191ին:

Համադասպ Ա ունեցած է որդի մը՝ Սմբատ: Գոնէ միայն այս կը
յիշուի և ծանոթ է մեզի առ այժմ: Ստիկոյն 1215էն արձանագրութեան մը
մէջ կը յիշուի. «Ես՝ Կոստանդ, որդի Գրիգորո, թոռն (Համադ)ասպենց...»
(Յիշատ. 4): Որպէսզի Կոստանդ ըլլայ թոռն Համադասպ Ա-ի, պէտք է որ իր
հայրը Գրիգոր՝ որդին եղած ըլլայ Համադասպ Ա-ի: Ասիկա ցոյց կու տայ որ
Համադասպ Ա Սմբատէ զատ ունեցած է երկրորդ որդի մը՝ Գրիգոր, զոր մենք
պիտի կոչենք Գրիգոր Ա, ինչպէս որ Սմբատին պիտի տանք Առաջին թուագի-
րը, որպէսզի կարելի եղածին չափ չփոթուի անոր տեղի չտանք:

Համադասպ Ա-ի կենդ անունը նոյնպէս անձանոթ կը մնայ մեզի առ
այժմ: Չենք գիտեր նաև իր մահուան թուականը, սակայն Սանահին թաղ-
ուած կ'երեւի, ուր մեծ գաւիթին մէջ գտնուած տապանաքարերուն չարքին
կը գտնուի հետ մընայ «Համադասպ մեծ» կարգացուած («Սանահինի Վանքը»,
Էւն. էջ 141): Անտոյոբ է նման տիտղոս («մեծ») տապանագրութեան մէջ ան-
ուն կից: Գուցէ «մեծ»ը «մարծպան»ի աղադրութիւնը ըլլայ: Կրնայ ըլլալ
նաև որ «մեծ» գործածուած է զինք բացորոշելու համար իր Համադասպ (որ-
դի Սմբատայ) թոռէն: 1211ի յիշատակարանին մէջ (թիւ 5) անգամ մը յիշ-
ուած կը գտնենք իբր «Աւադ Համադասպանց», այսինքն Համադասպ Աւադ
կամ «մեծ» իմաստով:

Գ Ր Ի Գ Ո Ր Ա

Զինք կը յիշէ իր Կոստանդ որդին միակ անգամ մը, թիւ 4 յիշատա-
կարանին մէջ՝ սապէս. «Ի թուին ՈԿԴ (1215): Ես՝ Կոստանդ, որդի Գրիգոր-
ո, թոռն Համադասպենց...»: Նոյն այդ տարին ուրիշ արձանագրութեան
մը մէջ (Յիշատ. թիւ 3) Համադասպ Ա-ի միւս որդին՝ Սմբատ՝ կը յիշուի